# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<< ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-13/2024/ՊԾ >> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

**Ք.Երևան** **«10»05.2024թ.**
**ժամը 16:00**

**Մասնակցում են՝**
ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՊԾ պարեկային ծառայության կազմակերպման վարչության պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Դ. Հակոբյան (հանձնաժողովի նախագահ),
բ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՊԾ պարեկային ծառայության կազմակերպման վարչության պարեկային ծառայության կազմակերպման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ա. Սարգսյան (գնահատող անդամ),
գ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՊԾ մոնիթորինգի և քրեաբանական վերլուծության վարչության քրեաբանական վերլուծության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Սայադյան (գնահատող անդամ),
դ. Գնումներ համակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Աբասյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **շարժական կռունկի** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-13/2024/ՊԾ** ծածկագրով ընթացակարգի բացման նիստում արձանագրվեց՝

**ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-13/2024/ՊԾ** ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

| N | Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը | Հայտ ներկայացրած մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | ԷՄ ԸՆԴ ԷՎ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Արզումանյան 15 շենք, բն 35 , էլ փոստ: emandevholding@mail.ru |
| 2 | «------------------------------» ՍՊԸ | ------------------------------------------ |
| 3 | «Էյ Սի ի Գրուպ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ, 24 ,27 բն, էլ. Փոստ: samvel.ssh@gmail.com |

Մասնակիցների ներկայացրած հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան, ծրագրի կողմից ճանաչվում են որպես վավեր, և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը:

**Չափաբաժին 1, Գնման առարկա՝**

| Չափաբաժնի համար | Cpv | Անվանում | Քանակ | |
|---|---|---|---|---|
| 1 | 42412900/501 | շարժական կռունկներ | 1 հատ | |

Մասնակիցների առաջարկված գները՝

# ԳՆԱՌԱՋԱՐԿՆԵՐ

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | 1 | ԷՄ ԸՆԴ ԷՎ ՅՈԼԴԻՆԳ | 419700000 AMD | 421000000 AMD | 0 % | 421000000 AMD | 29666000 AMD | 0 % | 29666000.00 AMD |
| 1 | 2 | [illegible] | 419700000 AMD | 333320000 AMD | 20 % | 399984000 AMD | 300000000 AMD | 20 % | 360000000.00 AMD |
| 1 | 3 | «Էլ Սի Ի Գրուպ» ՍՊԸ | 419700000 AMD | 349730300 AMD | 20 % | 419676360 AMD | 349730300 AMD | 20 % | 419676360.00 AMD |

**Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ՝ ԷՄ ԸՆԴ ԷՎ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ- ի** կողմից **չեն ներկայացվել** Հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետով պահանջվող հայտի ապահովումը, այն է՝ 7.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 2) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է **գնման գնի հինգ տոկոսին**:

**Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի ե/կետը**, այն է մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում, որի չափը հավասար է գնման գնի հինգ տոկոսին: Եթե մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը, ապա հայտի ապահովման չափը հավասար է գնային առաջարկի հինգ տոկոսին: Գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում **բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովումը ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակով ...:**

**Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝ Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը**, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան...:

**ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-13/2024/ՊԾ** ծածկագրով ընթացակարգը **համարվում է չկայացած**՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» **օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի** համաձայն:

Համաձայն **ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի ե/կետի՝** գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում հայտի ապահովումները մյուս մասնակիցներին վերադարձվում է անգործության ժամկետն ավարտվելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

| | |
|---|---|
| **Հանձնաժողովի Նախագահ՝** | Դ. Հակոբյան |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | Ա. Սարգսյան |
| | Ա. Սայադյան |
| **Քարտուղար՝** | Ա. Աբասյան |